Պարույր Սևակ

Նախորգանքի փոխարեն

Դու մի՛շտ ինձ համար եղել ես կյանքում,
Մի՞շտ, թեկուզ հաճախ ուրիշի տեսքով-
Այսօր աղմըկոտ այս մեծ քաղաքում,
Երեկ՝ հեռավոր ինչ-որ գյուղակում՝
Աչքերիդ պես բիլ երկնքի ներքո:
Ես հենց քեզ հետ եմ խաղացել «տուն-տուն»
Ու դդյակ շինել կավից ու քարից:
Քեզնով է լցված մի մե՛ծ մանկություն,
Երազներով լի մի պատանությո՛ւն
Եվ ջահելությո՛ւն մի փոթորկալից:
Տասնյա՞կ անուն ես ունեցել կյանքում,
Տասնյա՞կ ձևերով կանգնել ես իմ դեմ
Եվ միշտ ներշնչել այն սերը մաքուր,
Որ և իր տասնյակ էսքիզներն արդեն
Քո պատկերով է այսօր ավարտել:

VII.1953թ.
Նավչալու